ԵԴ/4022/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

27 հուլիսի 2021 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Ռուբիկ Հայրապետյանի ընդդեմ «Թուլս Թաուն» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 8-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

1. Ռուբիկ Հայրապետյանի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ներկայացուցիչը 2021 թվականի փետրվարի 3-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Թուլս Թաուն» ՍՊԸ-ի, որով պահանջել է. *««Թուլս Թաուն» ՍՊԸ-ից հօգուտ Ռուբիկ Հայրապետյանի բռնագանձել 1.018.962 ՀՀ դրամ՝ որպես մարտ, ապրիլ ամիսների չվճարված աշխատավարձ և վերջնահաշվարկի գումար»:*

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Առաջին ատյանի ատարանը (դատավոր՝ Մ.Տաշչյան) 2021 թվականի հունիսի 22-ին որոշում է կայացրել գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործով ներկայացված պահանջը գույքային պահանջ է (չվճարված աշխատավարձի և տույժի բռնագանձում) և այն, որ հիշյալ գործով պատասխանող է հանդիսանում սնանկ ճանաչված «Թուլս Թաուն» ՍՊԸ-ն, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործը պետք է քննվի ՀՀ սնանկության դատարանի կողմից «Թուլս Թաուն» ՍՊԸ-ի սնանկության գործի շրջանակներում»:*

4. Թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործը 2021 թվականի հուլիսի 6-ին մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Գ.Ավագյանին:

5. Սնանկության դատարանը 2021 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով պատասխանողների սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ունենալու դեպքում առաջին հերթին իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերով պետք է քննարկման առարկա դարձեն գործի վարույթը կարճելու հարցը:*

Սույն դեպքում գործը հարուցված է եղել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ չվճարված աշխատավարձի, վերջնահաշվարկի և տույժերի գումարները բռնագանձելու պահանջով, հետևաբար սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով: Ընդ որում, Սնանկության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը պետք է իրականացնի սույն գործի հետագա քննությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ սույն գործը ՀՀ սնանկության դատարանում քննության ենթակա չէ»:

6. Թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի հուլիսի 22-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *կարող էր արդո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործն ըստ ենթակայության հանձնել Մնանկության դատարան՝ առանց քննարկելու գործի վարույթը կարճելու հնարավորության հարցը:*

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

9. «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...): Մնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր)»:*

Նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի*

նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան»:

10. Սույն որոշման 8-9 կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն նախատեսված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացնում է Սնանկության դատարանը: Սնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

11. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ *«(…) դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է՝ (…), Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար, (…)»:*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով:

12. Սույն որոշման 11-րդ կետում վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով պատասխանողների սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, առաջին հերթին պետք է քննարկման առարկա դարձնեն այդ գործերով վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքով կարճելու հնարավորության հարցը:

Ընդ որում, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իրավանորմի ուսումնասիրությունից հետևում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա են կարճման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող այն քաղաքացիական գործերի վարույթները, որոնցով հայցվորի կողմից պատասխանողին ուղղված է ***գումարի բռնագանձման պահանջ*** կամ գույք հանձնելու պահանջ: Հետևաբար՝ «Սնանկության մասին» օրենքի վկայակոչված հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու անհրաժեշտությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) քաղաքացիական գործով պատասխանողը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ է ճանաչվել,

բ) քաղաքացիական գործով սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ներկայացված է գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ:

13. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ռուբիկ Հայրապետյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Թուլս Թաուն» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

- Սնանկության դատարանի 2021 թվականի հունիսի 22-ի վճռով «Թուլս Թաուն» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործով պատասխանող «Թուլս Թաուն» ՍՊԸ-ի դեմ ներկայացված է եղել գումարի բռնագանձման պահանջ, որից հետո Սնանկության դատարանի վճռով պատասխանող «Թուլս Թաուն» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ: Այսինքն՝ սույն գործով առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված՝ Առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող քաղաքացիական գործի վարույթը կարճելու նախապայմանները: Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, չքննարկելով թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգով կարճելու հնարավորության հարցը, այն հանձնել է Սնանկության դատարանի քննությանը:

15. Վերը բերված պատճառաբանություններով գտնում եմ, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չէր կարող թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել Մնանկության դատարան, քանի դեռ չէր քննարկել գործի վարույթը կարճելու հնարավորության հարցը:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/4022/02/21 քաղաքացիական գործն ըստ հայցի Ռուբիկ Հայրապետյանի ընդդեմ «Թուլս Թաուն» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ